ՈՍԿԵ ԴԻՎԱՆ. ՀԵՔԻԱԹԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

N 4 (2012-2013)

VOSKE DIVAN: JOURNAL OF FAIRY TALE STUDIES

N 4 (2012-2013)

ВОСКЕ ДИВАН: ЖУРНАЛ ПО СКАЗКОВЕДЕНИЮ

N 4 (2012-2013)

ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

SUMMARIES

РЕЗЮМЕ

АРМЯНСКАЯ НАРОДНАЯ СКАЗКА ГЛАЗАМИ ИНОКУЛЬТУРНОГО ЧИТАТЕЛЯ

Нелли Хачатурян

Ереванский государственный университет

Народная сказка отображает национальную картину мира и национальный менталитет. Реконструирование восприятия мира в армянской сказке с позиций русской культуры позволяет подчеркнуть ее специфику. В статье сопоставляются основные черты армянской народной сказки, литературной сказки и произведений жанра фэнтези с русскими аналогами. При переводе армянских сказок на русских язык важно передать национальную картину мира, которая рассматривается как совокупность национальной концептосферы и национального менталитета. При таком подходе рассматриваются и разъясняются такие конкретные формы национального бытия, как ландшафт, флора и фауна, искусство, праздники, традиции и обычаи, высвечивающие самую суть народного бытия.

Ключевые слова: народная сказка, литературная сказка, фэнтези, национальная картина мира, перевод, русская культура, армянская культура, формы бытия, ландшафт, аналоги.

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ ՕՏԱՐ ԸՆԹԵՐՑՈՂԻ ԱՉՔԵՐՈՎ

Նելի Խաչատուրյան
Երևանի պետական համալսարան

Ժողովրդական հեքիաթն ազգային մտածողության և աշխարհընկալման յուրատիպ արտահայտությունն է: Հայ ժողովրդական հեքիաթի վերստեղծումը ռուսական մշակույթի համատեքստում թույլ է տալիս առավել տեսանելի դարձնել հայկական հեքիաթի առանձնահատկությունները: Հոդվածում հայ ժողովրդական հեքիաթի մի շարք բնորոշ հատկանիշներ զուգադրվում են ռուսական հեքիաթի համարժեք երևույթների հետ: Հայ ժողովրդական հեքիաթները թարգմանելիս անհրաժեշտ է փոխանցել նաև ազգային աշխարհընկալման նրբությունները: Նման մոտեցման դեպքում առանցքային կարևորություն են ստանում կեցության հստակ արտահայտությունները՝ լանդշաֆտը, բուսական և կենդանական աշխարհը, ազգագրական ու առարկայական ցուցիչները, արվեստը, տոներն ու ավանդույթները:

Բանալի բառեր՝ բնապատկեր, ժողովրդական հեքիաթ, հեղինակային հեքիաթ, թարգմանական հեքիաթ, թարգմանություն, ազգային աշխարհընկալում, ռուսական մշակույթ, հայկական մշակույթ, համարժեք:

THE ARMENIAN FOLKTALE FROM THE PERSPECTIVE OF A FOREING READER

Nelly Khachaturyan

Yerevan State University

Folktales represent the national concept and image of the world. The "telling" of Armenian folk tales in the milieu of Russian culture often makes features inherent in Armenian tales more visible. In the article a number of key elements of Armenian folktales are compared with Russian analogues. When translating Armenian folktales into Russian it is important to convey the national image of the world present in the source texts, and bring the breadth of the original tale. Such an approach suggests an adequate rendering of notions representing national identity: landscape, flora and fauna, ethnographic indices (food, utensils, clothes, transport), art, holidays, traditions and customs etc.

Key words: folktale, literary tale, fantasy, concept, national world picture, translation, translated tale, Russian culture, Armenian culture, entities, analogue.

ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԸ ՈՐՊԵՍ ՏԵՔՍՏ

Ալվարդ Ջիվանյան

Երևանի պետական համալսարան

Թարգմանական հեքիաթը միջմշակութային տեքստ է: Ասվածը ճիշտ է հատկապես միջնորդավորված թարգմանության վերաբերյալ: Հեքիաթի հրատարակման պատմության մեջ միջնորդավորված թարգմանությունն ավելի շուտ կանոն է, քան բացառություն: Այսպիսով, հնարավոր է վերանայել միջնորդավորված թարգմանության կարգավիճակը գոնե հեքիաթի թարգմանության տիրույթում: Գրիմ եղբայրների՝ հայերեն տարբերակների ցանկն ընդգրկում է

գերմաներեն-ֆրանսերեն-հայերեն, գերմաներեն-ռուսերեն-հայերեն թարգմանություններ, փոխադրություններ և վերապատումներ: Իսկ եթե համաձայնենք, որ որոշ վաղ ֆրանսիական թարգմանություններ հիմնված են անգլերեն տարբերակների վրա, կունենանք բարդ, բայց յուրատիպ գերմաներեն → անգլերեն → ֆրանսերեն → ռուսերեն → հայերեն մի զարմանալի թարգմանական շղթա: Նման մոտեցման դեպքում, թարգմանության որակն ու համարժեքության աստիճանը չէ, որ կարևորվում է, այլ հեքիաթի բնագիր տեքստի փոխակերպման ներուժը:

Բանալի բառեր՝ միջմշակութային տեքստ, միջնորդավորված թարգմանություն, թարգմանական շղթա, համարժեքության աստիճան, աղբյուր տեքստ, փոխակերպում, թարգմանական տարբերակներ, վաղ թարգմանություն, թարգմանական մեկնություն, հրատարկման պատմություն:

THE TRANSLATED TALE AS A TEXT

Alvard Jivanyan

Yerevan State University

The translated text is a cross-cultural text and this is true of mediated translations in the first place. The history of fairy tale publishing is rich in indirect translations, and we can reconsider the status of mediated translation at least in the field of fairy tale studies. The list of mediated translations of the Grimms into Armenian includes German-French-Armenian, German-Russian-Armenian, and even German-French-Russian-Armenian interpretations, adaptations and retellings. In case we accept that some French translations were based on English renderings we will deal with a unique German-English-French-Russian-Armenian translation sequence. It is not the quality of the translation or its fidelity to the original we are interested in but the potential of the source text to modify.

Key words: cross-cultural text, mediated translation, translation sequence, degree of equivalence, source text, transformation, translated version, early translations, interpretation, history of publication.

ПЕРЕВОДНАЯ СКАЗКА КАК ТЕКСТ

Алвард Дживанян

Ереванский государственный университет

Переводная сказка является межкультурным текстом, что особенно явно ощущается в случае опосредованного перевода. В истории публикации сказки опосредованный перевод -- скорее правило, чем исключение, и соответственно статус опосредованного перевода в контексте изучения сказки следует пересмотреть. Список переводов сказок Братьев Гримм на армянский язык включает немецко-армянские, немецко-французско-армянские, немецко-русско-армянские интерпретации. А если учесть, что некоторые французские переводы основаны на первое английское издание Гриммов, то получается уникальная последовательность: немецко-английско-французско-русско-армянский. При таком подходе в центре внимания исследователя не качество перевода и его эквивалентность оригиналу, а трансформируемость исходного материала как уникальное свойство сказочного текста.

Ключевые слова: межкультурный текст, опосредованный перевод, последовательность переводов, степень эквивалентности, исходный текст, трансформация, переводные варианты, ранние переводы, интерпретация, история публикации.

МОТИВЫ ОПТИКИ И СТЕКЛА В СКАЗКАХ Э.Т. А. ГОФМАНА И ОСОБЕННОСТИ ИХ ПЕРЕВОДА НА РУССКИЙ ЯЗЫК

Елена Карабегова
ЕГЛУ им. В. Брюсова

Мотивы стекла играют важную роль в поэтике художественных сказок Э.Т.А.Гофмана и требуют особенно точного перевода. Это оптические приборы и предметы, изготовленные из стекла. Они нередко обозначают границу между волшебным и реальным мирами. Наиболее многообразно мотивы стекла воплощаются в поэтике сказки «Золотой горшок», в которой победа добрых сил волшебного мира над злыми отражается еще и в победе хрусталя как природного материала над стеклом как символом филистерского мира.

Ключевые слова: немецкая сказка, мотив, точный перевод, граница двух миров, символ, волшебный мир, поэтика сказки, литературная сказка, разнообразие мотивов.

THE MOTIF OF GLASS AND OPTICS IN HOFMANN’S TALES: ASPECTS OF TRANSLATION INTO RUSSIAN

The motif of glass plays an important role in the poetics of E.T.A. Hoffmann’s tales and requires accurate translation. Various optical devices and objects are found in his works. They often represent the boundary between the real and magical worlds. In *The Golden Pot* the victory of Good over the Evil is shown as the victory of natural crystal over glass: the latter is seen as a symbol of the philistine world.

Key words: German tale, motif, accurate translation, the boundary between worlds, symbol, magic world, poetics of the tale, literary tale, variety of motifs.

ԱՊԱԿՈՒ ԵՎ ՕՊՏԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ԴԻՊԱՇԱՐԸ ՀՈՖՄԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ․ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ելենա Կարաբեգովա

Վ. Բրյուսովի անվան ԵՊԼՀ

Ապակուն առնչվող դիպաշարն առանձքային տեղ է գրավում Հոֆմանի ստեղծագործության մեջ, մասնավորապես հեքիաթներում: Այս դիպաշարի թարգմանությունը պահանջում է առանձնահատուկ մոտեցում, որպեսզի թեմատիկ փոխադրության հետ մեկտեղ պահպանվի դիպաշարի իմաստային բազմաշերտությունը: Հոֆմանի «Ոսկե կճուճ» հեքիաթում ապակին հանդես է գալիս որպես այս աշխարհի և տարաշխարհիկ տիրույթի սահմանագիծ: Իսկ բարու հաղթանակը չարի հանդեպ այլաբերական մարմնավորում է ստանում բյուրեղապակու և հասարակ ապակու պայքարում. վերջինս հնարավոր է մեկնել որպես քաղքենի աշխարհի խորհրդանիշ:

Բանալի բառեր. գերմանական հեքիաթ, դիպաշար, ճշգրիտ թարգմանություն, երկու աշխարհների սահմանագիծ, խորհրդանիշ, կախարդական աշխարհ, հեքիաթի պոետիկա, գրական հեքիաթ, դիպաշարային բազմազանություն:

ГРУЗИНСКОЕ ИЗДАНИЕ АРМЯНСКИХ СКАЗОК

Елена Гогиашвили

Тбилисский государственный университет

Арменологические исследования всегда были в центре внимания грузинских ученых. В Грузии систематически публиковались переводы произведений армянских писателей. В 1939 г. был издан полный перевод эпоса «Давид Сасунский», басен Мхитара Гоша и Вардана Айгекци. В 1976г. в серии «Сказки народов мира» вышел сборник армянских народных сказок под редакций З. Алексидзе. Сборник состоит из волшебных и новеллистических сказок, а также сказок о животных. Сюжеты создают богатый материал для текстуального анализа

армянской народной прозы и рассмотрения особенностей взаимоотношений кавказского фольклора со всемирным. Издание представляет интерес для исследователей, изучающих грузино-армянские фольклорные параллели и мифологические аспекты сказки.

Ключевые слова: армянская народная сказка, перевод, арменоведение, волшебная сказка, новеллистическая сказка, сказки о животных, грузино-армянские параллели, мифология, кавказский фольклор, всемирный фольклор.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ելենա Գոգիաշվիլի

Թբիլիսիի պետական համալսարան

Հայագիտական ուսումնասիրությունները միշտ եղել են վրաց գիտնականների ուշադրության կենտրոնում: Վրաստանում պարբերաբար թարգմանվել և հրատարակվել են հայ գրականության գոհարները՝ այդ թվում «Սասունցի Դավիթ» էպոսը, Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները: 1976-ին «Աշխարհի ժողովուրդների հեքիաթները» շարքում լույս է տեսնում հայ ժողովրդական հեքիաթների ժողովածուն (խմբագիր՝ Զ.Ալեկսիձե), որ ընդգրկում էր ոչ միայն հրաշապատում, իրապատում և կենդանական հեքիաթներ, այլև մի շարք առակներ: Այս կարևոր հրատարակությունը բացահայտում էր հայ-վրացական բանահյուսական զուգահեռներ, իսկ դիպաշարային բազմազանությունը հնարավորություն էր տալիս հայկական հեքիաթը տեսնել կովկասյան և համաշխարհային հեքիաթի համատեքստում:

Բանալի բառեր՝ հայ ժողովրդական հեքիաթ, թարգմանություն, հայագիտություն, հրաշապատում հեքիաթ, իրապատում հեքիաթ, կենդանական հեքիաթ, վրաց-հայկական զուգահեռներ, առասպելաբանություն, կովկասյան բանահյուսություն, համաշխարհային բանահյուսություն:

GEORGIAN EDITION OF ARMENIAN FOLKTALES

Yelena Gogiashvili

Tbilisi State University

Georgian scholars have always been interested in different branches of Armenian studies. Translations of Armenian classical literature and folklore were constantly published in Georgia. In 1976 Z. Aleksidze published a collection of Armenian folktales. The volume included tales of magic, animal tales and fables. It was part of *Folktales around the world* project and is significant for researchers interested in Georgian and Armenian folklore parallels and mythological aspects of tales. The variety of plots provided a vast ground for textual analysis of the folk tale material in the context of Caucasian and world folklore.

Key words: Armenian folktale, translation, Armenian studies, tales of magic, animal tales, Georgian and Armenian parallels, mythology, Caucasian folklore, world folklore.

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՍԻՄՎՈԼԻԿԱՆ ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՈՒՄ

Նվարդ Վարդանյան

Երևանի պետական համալսարան

Հեքիաթային աշխարհը բաղկացած է երկու հիմնական մասից՝ այս աշխարհից և այլ աշխարհից: Այս երկու տարածքների միջև կա ևս մեկը՝ սահման, որը հերոսը պետք է հատի, որպեսզի հայտնվի հրաշքների ու գերբնական էակների տիրույթում: Որպես այլ աշխարհ տանող սահմանային գոտիներ հայկական հեքիաթներում սովորաբար հանդես են գալիս անտառները, սարերը, քարայրները, ծովերը, գետերը, ջրհորներն ու գերեզմանները, որոնք երբեմն դառնում են նաև հերոսների ժամանակավոր կացարանները: Սահմանային այսպիսի գոտիներում հերոսները հայտնվում են կյանքի սահմանային

իրավիճակներում՝ ծնունդ, մահ, ամուսնություն, երբ մարդը, ըստ հնագույն հավատալիքների, հատում է այլ աշխարհի սահմանը: Պատահական չէ, որ հիշյալ վայրերում են հայտնվում հղի կամ ծննդաբերող կանայք, մահվան դատապարտված կերպարները, արքայազների ապագա հարսնացուները:

Բանալի բառեր՝ ժողովրդական հեքիաթ, հրաշապատում հեքիաթ, գերբնական աշխարհ, ժամանակավոր կացարան, տարածության սիմվոլիկա, սահմանային գոտիներ, հնագույն հավատալիքներ, ծնունդ, մահ:

MARGINAL SPACE SYMBOLISM IN FAIRY TALES

Nvard Vardanyan
Yerevan State University

The world of the fairy tale often presents two distinct spaces: this world and the Otherworld. Between these two domains there exists a boundary, and the hero has to cross it to appear in the Realm of the Supernatural. In Armenian tales the marginal spaces are usually forests, mountains, seas, rivers, caves, tombs. These often become a temporary dwelling place of the protagonist appearing in marginal states of life: birth, marriage and death.

Key words: folk tale, fairy tale, supernatural world, temporary residence, space symbolism, forest, marginal space, archaic beliefs, birth, matrimony.

СИМВОЛИКА МАРГИНАЛЬНЫХ ЗОН В ВОЛШЕБНОЙ СКАЗКЕ

Нвард Варданян
Ереванский государственный университет

Пространство сказки состоит из двух основных миров - этот мир и иной, потусторонний. Между этими двумя мирами есть граница, которую герой должен

пересечь, чтобы оказаться в сверхъестественном мире. В армянских сказках обычно маргинальными пространствами являются леса, горы, моря, реки, пещеры, гробницы, которые иногда становятся временным жильем героев. Здесь герои часто оказываются в пограничных жизненных ситуациях, таких, как рождение, смерть и брак, когда человек согласно старинным поверьям, пересекает границу потустороннего мира.

Ключевые слова: народная сказка, волшебная сказка, сверхьестественный мир, временное жилище, символизм пространства, лес, маргинальное пространство, архаические верования, рождение, супружество.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СЮЖЕТНО-МОТИВНЫХ ВАРИАНТОВ СКАЗКИ ЗОЛУШКА

Гоар Меликян

Институт археологии и этнографии НАН РА

В мировой сказочной традиции «Золушка» одна их самых популярных и любимых сказок. Наверное, нет такой культуры, в устной традиции которой, не было хоть одного варианта «Золушки». С начала 19 века многие фольклористы пытались изучить генезис сказки, найти исходную сказку, однако данные были противоречивыми и не увенчались успехом. Исследование вариантов одного цикла может представить различные модификации понятийной картины мира у разных народов. Мотивно-сюжетный анализ сказок разных народов показывает уникальную способность сказки адаптироваться и манипулировать устойчивыми элементами и мотивами, а также помогает выявить национальные особенности сказки.

Ключевые слова: сказка, Золушка, генезис сказки, прецедентный текст, мотив, сюжет, устойчивые элементы сказки, образ мачехи, интерпретация, фемининность.

ON PLOT AND MOTIF VARIANTS OF CINDERELLA TALES

Gohar Melikyan

Institute of Archaeology and Ethnography, NAS RA

In the fairy tale tradition Cinderella holds a unique place: variants of the tale can be found in the oral tradition of almost every culture. From the beginning of the 19th century folklorists have been trying to study the genesis of the tale, its *uhrtext*. Their numerous theories, however, were, rather contradictory and had little success. Analysis of various tellings of Cinderella reveal different modifications of a series of constant text elements. Plot and motif interpretations prove the major quality of the fairy tale narrative, its transformability.

Key words: fairy tale, Cinderella cycle, genesis of the tale, precedential text, motif, plot, slipper, stepmother character, constant elements, interpretation, femininity.

«ՄՈԽՐՈՏԸ» ՇԱՐՔԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԴԻՊԱՇԱՐԱՅԻՆ ԵՎ ՍՅՈՒԺԵՏԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՇՈՒՐՋ

Գոհար Մելիքյան

ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հեքիաթագիտության մեջ «Մոխրոտն» ամենաուսումնասիրված տեքստերից է: Թերևս չի գտնվի ազգ կամ մշակույթ, որի բանավոր ավանդույթում չլինի «Մոխրոտին» համարժեք մի պատում: XIX դարից սկսած բանագետները փորձում են գտնել պատմության աղբյուր տաքերակը, որն այնուհետև սփռվել է աշխարհով մեկ: Այս ջանքերը սակայն հաջողությամբ չպսակվեցին: Հոդվածում քննվում են «Մոխրոտը» շարքի հեքիաթների դիպաշարային, սյուժետային,

թեմատիկ առանձնահատկությունները: Տարբերակների զուգադրական մեկնությունը բացահայտում է հեքիաթների ազգային առանձնահատկությունները, ինչպես նաև հրաշապատում հեքիաթի տեքստի ամենակարևոր հատկություններից մեկը՝ բազմաթիվ կայուն և ոչ կայուն դիպաշարային տարրերի փոխակերպումը:

Բանալի բառեր՝ հրաշապատում հեքիաթ, Մոխրոտ, ծագումնաբանություն, նախադեպային տեքստ, դիպաշար, սյուժե, կայուն տարրեր, խորթ մոր կերպար, մեկնություն, կանացի բնույթ:

ԵՂՆԻԿ ԱՂՋԿԱ ՄՈՏԻՎԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

Եվա Զաքարյան
ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Հայկական հեքիաթներում հաճախ հանդիպում է մի մոտիվ չքնաղ աղջիկ դարձող եղնիկի մասին, որի պատճառով բազմաթիվ երիտասարդ որսորդներ են կործանվում, մինչև գլխավոր հերոսին որոշակի փորձությունների ենթարկելուց հետո եղնիկ աղջիկը դառնում է նրա կինը՝ զրկվելով թովչական հատկություններից: Այս մոտիվը ինչպես հարևան կովկասյան ժողովուրդների առասպելաբանության մեջ, այնպես էլ հայկական հեքիաթներում իր վաղնջական արմատներով առնչվել է մայրիշխանության ժամանակաշրջանում սկիզբ առած՝ անտառների, վայրի բնության և կենդանական աշխարհի պահապան ոգու հավատալիքներին:

Բանալի բառեր՝ եղնիկ-աղջիկ, անտառի պահապան ոգի, վայրի բնություն, կենդանիների տիրուհի, մարալ, ջեյրան, որսորդ, վրացական առասպելաբանություն, արգելքը խախտել, դրախտային անտառ:

МОТИВ ДЕВУШКИ-ОЛЕНЯ В АРМЯНСКИХ НАРОДНЫХ СКАЗКАХ

Ева Закарян

Институт археологии и этнографии НАН РА

В армянских народных сказках часто встречается мотив оленя, превращающегося в прекрасную девушку. Девушка-олень обладает особыми чарами, из-за нее погибают многие молодые охотники. После того, как она, подвергая главного героя испытаниям, становится его женой, она теряет свои волшебные чары. Этот мотив встречается как в армянских сказках, так и в мифологии народов Кавказа. Данный мотив своими корнями связан с древними представлениями о матриархате, о духах-хранителях лесов, дикой природы и животного мира.

Ключевые слова: девушка-олень, хранитель леса, дикая природа, властительница животных, марал, газель, охотник, грузинская мифология, нарушать запрет, райский лес.

THE MOTIF OF THE DEER MAIDEN IN ARMENIAN FOLKTALES

Yeva Zakaryan

Institute of Archaeology and Ethnography, NAS RA

In Armenian folktale tradition there is a motif of the deer transforming into a beautiful maiden. Hunters who are lured into her presence often fail to notice that she is not a natural woman and are stomped to death. As soon as she marries the protagonist her charms disappear. This motif is popular not only in Armenian folktale tradition but in Caucasian Mythology in general. The motif goes back to ancient notions of matriarchy, of guardian spirits of forest and wild nature.

Key words: deer-maiden, forest spirit, wild nature, animal mistress, maral, gazelle, hunter, Georgian mythology, taboo breaking, paradise, forest.

ԱՆՏՈՒԱՆ ԴԸ ՍԵՆՏ-ԷՔԶՅՈՒՊԵՐԻԻ «ՓՈՔՐԻԿ ԻՇԽԱՆԸ» ՎԻՊԱԿԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԸՍՏ ՕԲՅԵԿՏԻՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Երևանի պետական համալսարան

Հոդվածի քննության առարկան ժամանակակից թարգմանաբանության խնդիրներից մեկն է՝ թարգմանության գնահատումն ըստ օբյեկտիվ չափանիշների: Փորձ է արվում գնահատել էքզյուպերիի «Փոքրիկ Իշխանը» վիպակի հայերեն վեց թարգմանական տարբերակները՝ առաջին անգամ զուգադրական ուսումնասիրության առարկա դարձնելով նաև արևմտահայերեն տեքստը: Նյութի ընտրությունը պատահական չէ, քանի որ Անտուան դը Սենտ-էքզյուպերիի «Փոքրիկ իշխանը»՝ բանաստեղծական և փիլիսոփայական այս հեքիաթը, աշխարհում ամենից հաճախ թարգմանվող գիրքն է «Նոր Կտակարանից» հետո: Եվ մեր խնդիրն է արժևորել առկա թարգմանությունները՝ ըստ գոյություն ունեցող չափանիշների:

Բանալի բառեր՝ թարգմանություն, գնահատում, օբյեկտիվ չափանիշ, զուգադրական մեկնություն, փիլիսոփայական հեքիաթ, թարգմանաբանություն, համարժեք թարգմանության չափանիշներ, արևմտահայերեն տարբերակ:

EVALUATING ARMENIAN TRANSLATIONS OF ANTOINE DE SAINT-EXUPERY'S *THE ITTLE PRINCE* ACCORDING TO OBJECTIVE CRITERIA

Anna Hakobyan

Yerevan State University

The article discusses one of the problems of modern translation studies - the evaluation of literary translation. Six Armenian translations of Saint-Exupery are considered from the points of view of literary criticism and linguistics. The choice is not accidental: The Little Prince is the most translated book in the world after the Bible. Each phrase in this lucid work is a maxim, and the detailed analysis of the translations reveals that some translators have not reached complete equivalency. For the first time the West-Armenian translation of the novella is examined as a part of comparative analysis.

Key words: translation, evaluation, objective criteria, equivalent, comparative interpretation, philosophical tale, translation studies, adequate translation criteria, West Armenian version.

ОЦЕНКА ПЕРЕВОДОВ СКАЗКИ АНТУАНА ДЕ СЕНТ-ЭКЗЮПЕРИ "МАЛЕНЬКИЙ ПРИНЦ" ПО ОБЬЕКТИВНЫМ КРИТЕРИЯМ

Анна Акопян

Ереванский государственный университет

Статья рассматривает одну из главных проблем современного переводоведения- оценку литературного перевода. Обьектами лингвистического и литературоведческого анализа являются шесть вариантов перевода на армянский

язык. Выбор произведения не случаен – «Маленький принц» Антуана де Сент-Экзюпери самая переводимая книга в мире, после Библии. Каждая фраза в этой сказке является максимом, и детальный анализ переводов показывает, что не все переводчики смогли достичь полной эквивалентности. Впервые изучается перевод на западноармянском языке, как часть сравнительного анализа.

Ключевые слова: перевод, оценка перевода, объективные критерии, эквивалент. сравнительная интерпретация, философская сказка, переводоведение, западноармянский вариант.

ԼԵԶՈՒՆ ԿՏՐԱԾ ԾԻՏԻԿԸ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անի Եղիազարյան

Հովհ. Թումանյանի թանգարան

Արևելքի ժողովուրդների իմաստնության ու մշակութային պատկերացումների բարձրագույն արտահայտությունը համարելով հեքիաթները՝ Թումանյանը ոչ միայն անգերազանցելի արվեստով թարգմանել ու փոխադրել է հնդկական, ճապոնական, արաբական շատ հեքիաթներ, այլև բուն իմաստով հայացրել է դրանք՝ հարստացնելով ու ընդարձակելով հայ ազգային հեքիաթագրական մշակույթի սահմանները: Թարգմանությունների այդ շղթայում իր ուրույն տեղն ունի «Լեզուն կտրած ծիտիկը» ճապոնական հեքիաթը՝ պարզության մեջ հնչեցնելով մարդկային որակի մերժելի հատկանիշները:

Բանալի բառեր. ճապոնական, թարգմանություն, փոխադրություն, հեքիաթագրական մշակույթ, հեքիաթամշակում, թումանյանական, հավելում, դաստիարակչական, ժողովրդական, գռեհկաբանություն, տարբերակ:

ЯПОНСКАЯ СКАЗКА «О ВОРОБЬЕ С ОТРЕЗАННЫМ ЯЗЫКОМ» В ПЕРЕВОДЕ ТУМАНЯНА

Ани Егиазарян

Музей Ованеса Туманяна

Считая сказки наивысшим проявлением мудрости и культурного мировосприятия восточных народов, Туманян не только блестяще перевел многие индийские, японские и арабские сказки, но и в прямом смысле арменизировал их, тем самым расширив границы армянских фольклорных традиций. В ряду этих переводческих произведений отведено место и сказке "О воробье с отрезанным языком", в незатейливом повествовании которой звучит тема отвергаемых качеств человеческого естества.

Ключевые слова: японская сказка, перевод, пересказ, туманяновский, воспитательный, фольклорный, обработка сказки, дополнение, вульгаризм, вариант.

TOUMANIAN'S TRANSLATION OF THE JAPANESE FAIRY TALE THE TONGUE-CUT SPARROW

Ani Yeghiazaryan

Hovhannes Toumanian Museum

Hovhannes Toumanian considered fairy tales to be the highest expression of Oriental wisdom and culture. Not only did he brilliantly translate Indian, Japanese, Arabic and other fairy tales, but he also made them Armenian enriching and expanding the limits of Armenian fairy tale culture. The Japanese tale The Tongue-Cut Sparrow has its unique place among the list of the poet's translations. The moral failings of humankind are revealed to the reader in a straightforward and simple style.

Key words: Japanese tale, translation, rendering, Toumanian, didactic, folklore, addition, vulgarism, variant.

ԵՐԵՔ ՀԵՔԻԱԹ - ԵՐԵՔ ԽՆՁՈՐ

Սոնա Սեֆերյան

Երևանի պետական համալսարան

Թարգմանիչը կիսվում է իր տպավորություններով անգլիական երեք հեղինակային հեքիաթների թարգմանության շուրջ: Առաջինը Լուիս Քերոլի «Ալիսը հրաշքների աշխարհում» և «Ալիսը հայելու աշխարհում» հեքիաթ վիպակներն են (թարգմանությունները՝ 1971, 1994 և 2012թթ.), որոնք զարմացնում են արտառոց տրամաբանությամբ և լեզվաարտահայտչական միջոցների գունագեղությամբ: Հաջորդը Ռ. Քիփլինգի «Պատմվածքներ հենց այնպես» ժողովածուն է (թարգմ.՝ 1994 և 2012), որի հիմքում ընկած են մի շարք հնդկական առասպելներ: Քենեթ Գրեհեմի «Քամին ուռիների մեջ» այլաբերական վիպակը, որի թարգմանությունը լույս է տեսել 2012 թ., հմայում է թե՛ մեծահասակ, թե՛ մանուկ ընթերցողին, քանզի պատմում է իրական արժեքների մասին: Այս հանրահայտ երկերի հայերեն մեկնությունը բացահայտում է բազմաթիվ թարգմանաբանական խնդիրներ՝ որոնց համարժեք լուծումով է պայմանավորված թարգմանության որակը:

ТРИ СКАЗКИ-ТРИ ЯБЛОКА

Сона Сеферян

Ереванский государственный университет

Автор статьи делится впечатлениями о своих переводах на армянский язык знаменитых английских литературных сказок – «Алиса в стране чудес» и «Алиса в Зазеркалье» Льюиса Кэрролла, переведенные в 1971г. и переизданные с поправками и дополнениями в 1994 и 2012 гг., «Истории просто так» Редьярда Киплинга, переведенные в 1992г. и переизданные в 2012г., и «Ветер в ивах» Кеннета Грэма (2012). Описаны некоторые трудности, с которыми сталкивался переводчик в течение работы. Были учтены все сложные аспекты перевода –

перевод нонсенса, национальные особенности произведений, индивидуальный стиль писателя, стилистические приемы, игра слов и т д.

Ключевые слова: литературная сказка, авторская сказка, переводная сказка, индивидуальный стиль, образ, игра слов, детская, детский читатель, персонаж, аллегория, логика.

THREE TALES: THREE APPLES

Sona Seferyan

Yerevan State University

In the article the translator shares her experience of the Armenian translation of three well-known English tales – Lewis Carroll's *Alice in Wonderland* and *Through the Looking Glass* (translated in 1971, later editions in 1994, 2012), *Just so Stories* by Rudyard Kipling (translated in 1992 and 2012), and The *Wind in the Willows* by Kenneth Grahame (translated in 2012). She describes the difficulties she had to overcome while interpreting the texts, paying special attention to the national peculiarities, individual style of the authors, samples of Nonsense writing, specific tropes and figures.

Key words: literary tale, translated tale, individual style, tropes and figures of speech, pun, nursery, child reader, character, allegory, logic.

ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վարդուհի Բալոյան

Գյումրու Տիրամայր Հայաստանի Պողոսյան

կրթահամալիր

Տարբեր ժողովուրդների բանահյուսական նյութերը, մասնավորապես հեքիաթները, թարգմանվել են արևելահայերեն և արևմտահայերեն ինչպես բնօրինակներից, այնպես էլ այլ լեզուներով միջնորդավորված: Մեծ թիվ են կազմում նաև թարգմանությունները արևելահայերենից արևմտահայերեն և հակառակը: Պետք է նշել, որ ներկայումս արևմտահայերենով հրատարակվող հեքիաթների անհրաժեշտությունն ավելի մեծ է ոչ միայն սփյուռքահայերին ավելի մատչելի դարձնելու, այլև լեզվի պահպանության առումով:

Բանալի բառեր՝ թարգմանական հեքիաթ, թարգմանության աղբյուր, արևմտահայերեն թարգմանություններ, ուղղակի թարգմանություն, միջնորդավորված թարգմանություն, սփյուռքահայ ընթերցող, մանկական գրականության հասանելիություն:

АКТУАЛЬНОСТЪ ВОСТОЧНОАРМЯНСКИХ И ЗАПАДНОАРМЯНСКИХ ПЕРЕВОДОВ СКАЗОК

Вардуи Балоян

Образовательный центр им. Богосянов, Гюмри

Фольклорные материалы народов мира, и, в частности, сказки, были переведены на западноармянский и восточноармянский как с оригиналов, так и через другие языки. Существуют и материалы, переведенные с западноармянского на восточноармянский и наоборот. В настоящее время необходимость издания

сказок на западноармянском велика не только для читателей в Диаспоре, но и для сохранения западноармянского языка.

Ключевые слова: переводная сказка, источник перевода, переводы на западноармянском, прямой перевод, опосредованный перевод, читатель в Диаспоре, доступность детских изданий.

ASPECTS OF EASTERN ARMENIAN AND WESTERN ARMENIAN TRANSLATIONS OF FAIRY TALES

Varduhi Baloyan

Our Lady of Armenia Boghossian Educational Centre, Gyumri

Folklore from around the world and folktales in particular have been translated into Eastern and Western Armenian both through direct translation and mediated renderings. Many folk and fairy tales are translated from Eastern Armenian into Western Armenian and vice versa. Presently, publishing folktales in Western Armenian is of great importance for the preservation of Western Armenian as a Diasporic language.

Key words: translated tale, source of translation, Western Armenian translations, direct translation, mediated translation, Diaspora reader, availability of children's literature.